ԿԱՐՄԵԼՅԱՆՆԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (XVII Դ.)

Ա. Վ. ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

XVII դ. եվրոպական տերություններն Ասիայում, Աֆրիկայում և Լատինական Ամերիկայի երկրներում հախուռն ձեռնամուխ եղան գաղութային քաղաքականության իրականացմանը։ Այդ գործի նախանձախնդիր բուրժուազիան սկսեց օգտագործել բազմապիսի ձևեր ու մեթոդներ, որոնց մեջ ի թիվս կապիտուլյացիոն իրավունքների, առևտրական ու քաղաքական զանազան պայմանագրերի, լայն տեղ էր հատկացվում նաև կրոնական քարոզչությանը։ Իր քաղաքական նպատակները խնամքով քողարկելով ընչազուրկ զանգվածների «պաշտպանի» դիմակով, XVII դ. սկզբից հռոմեական կաթոլիկ եկեղեցին և պապականության աշխարհանվաճ քաղաքականության գործակալները գրոհ նախաձեռնեցին դեպի Արևելք՝։

Հռոմի սևեռուն ուշադրության կենտրոնում էր գտնվում նաև Սեֆյան Իրանը, որն արդեն ընդգրկվել էր եվրոպական տերությունների տնտեսական ու քաղաքական հետաքրքրությունների շրջանակի մեջ։ Եթե բուրժուազիային հետաքրքրում էր լայնածավալ ու տարողունակ իրանական շուկան և այդ երկրում արտադրվող հումքի բազմապիսի տեսակները, ապա հռոմեական եկեղեցին Իրանը դիտում էր որպես անփոխարինելի հենակետ՝ Միջին արևելքի հսկայական տարածքում տեղական ժողովուրդների «հոգիների փրկությունը» իրականացնելու համար[2]։

Կաթոլիկ միսիոներների ներթափանցմանը Իրան մեծապես նպաստում էր նաև Սեֆյան շահերի ներքին և արտաքին քաղաքականությունը։ Մասնավորապես շահ Աբբաս I-ը (1587—1629) փայփայում էր քաղաքական լայնահուն ծրագրեր, որոնց իրականացումն առանց եվրոպական տերությունների օգնության բացառվում էր[3]։

Իրանն իրենց քարոզչական գործունեության ասպարեզ ընտրած միսիոներները պատկանում էին կաթոլիկական տարբեր միաբանությունների՝ ավգուստինյան, դոմինիկյան, կապուչինյան, ճիզվիտական և այլն, որոնցից յուրաքանչյուրն արտահայտում էր այս կամ այն եվրոպական պետության շահերը։ Այդ բոլոր միաբանությունների գործունեությունը ղեկավարող թելերը ձգվում էին դեպի Արևմուտքի տարբեր արքունիքներ, որոնք և ֆինանսավորում ու բարոյական աջակցություն էին ցույց տալիս միսիոներներին[4]։ Որպես կանոն, վերջիններս հաստատվում էին առավելապես առևտրական ճանապարհների վրա ընկած վայրերում, վարչաքաղաքական խոշոր կենտրոններում և այլն, «կրոնական պրոպագանդին զուգընթաց տանելով նաև քաղաքական աշխատանք»[5]։ Նրանք տնտեսական ու քաղաքական բնույթի տե-

---

[1] „The Cambridge History of the Bible", Vol. 3, Cambridge, 1963. p. 384—385.

[2] Th. Ch. Fleuriau, Estat present de l'Armenie, tant pour le temporel que pour le spirituel. Avec une description du pays et des moeurs de ceux qui l'habitent, Paris, 1694, p. 41.

[3] A. T. Wilson, The Persian Gulf. An historical sketch from the earliest times to the beginning of the twentieth century. London, 19 4, p. 13 —132.

[4] Charles A. Frazee, Catholics and Sultans, Cambridge, 1983, p. 88.

[5] *Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Բ, Երևան, 1959, էջ 7։*

ղեկություններ էին հավաքում Իրանի ներքին վիճակի, նրա միջազգային ու միջպետական հարաբերությունների մասին և դրանք հաղորդում եվրոպական պետություններին[6]։

Ի թիվս կաթոլիկական այլևայլ միաբանությունների անդամների, XVII դ. սկզբներից Իրան սկսեցին ներթափանցել և այնտեղ եռանդուն գործունեություն ծավալել նաև հռոմեական եկեղեցու, այսպես կոչված, «Բոկոտն կարմելյանների» միաբանության անդամները[7]։ Հիշյալ միաբանության մասին հարուստ ու բազմաբնույթ տեղեկություններ են պարունակվում Անանուն հեղինակի կողմից 1939 թ. Լոնդոնում անգլերեն լեզվով հրատարակված «Կարմելյանների տարեգրությունը» երկհատոր ստվարածավալ աշխատությունում[8], որի փաստաթղթերը հիմնականում հանված են Վատիկանի արխիվներից։ Այդ հրատարակությունը կարևորագույն աղբյուր կարող է հանդիսանալ նաև հայ ժողովրդի ուշ միջնադարի պատմության որոշ հարցեր ուսումնասիրելու համար։

Կարմելյանների միաբանության միսիոներներն առաջին անգամ Իրան են ուղարկվել 1604 թ.։ Այդ միսիոներներից Պոլ Սիմոնը, Ջոն (Ժուան) Թադդեուսը և Վինսենտը 1607 թ. որպես Հռոմի պապի անձնական դեսպանորդներ ժամանել են սեֆյանների մայրաքաղաք Սպահան[9]։ Նրանց հետևել են միսիոներների այլ խմբեր, որոնք հիմնավորվել են Շիրազ քաղաքում, Պարսից ծոցի Հորմուզ և Խարք կղզիներում, Սպահանի մոտ գտնվող հայաքաղաք Նոր Ջուղայում և այլն[10]։

Իրանում գործող կարմելյանների առաքելությունների ֆինանսավորումը կատարվում էր ոչ միայն Հռոմից, այլև Հնդկաստանի և նույնիսկ հեռավոր Մոզամբիկի միսիոներական կենտրոններից[11]։ Հետաքրքրաշարժ է այն փաստը, որ կարմելյանները խոշոր դրամագլուխ էին ներդրել ֆրանսիական Օստ-Հնդկական ընկերության մեջ, որն առևտրական և ֆինանսական գործարքներին նրանց մասնակցության պերճախոս վկայություն է[12]։ Թեև նրանք հանդես էին գալիս որպես Հռոմի պապի անմիջական ներկայացուցիչներ, սակայն լայնորեն օգտվում էին նաև Եվրոպայի առավել ազդեցիկ կաթոլիկ միապետների նյութական ու բարոյական աջակցությունից[13]։

Սովորաբար կարմելյան միսիոներներն Իրան էին ժամանում իրենց հետ ունենալով հանձնարարական նամակներ[14]։

Բնական է, որ քրիստոնեության տարածումը Իրանում չէր կարող իրականացվել հրի ու սրի միջոցով, և այնտեղ միսիոներները չէին կարող դիմել այնպիսի կամայականությունների, ինչպիսիք կիրառում էին այլ երկրներում, օրինակ Հարավային Ամերիկայում։ Դրա պատճառն այն է, որ Իրանում գոյություն ուներ ուժեղ և համեմատաբար կենտրոնացված պետություն, և, բացի այդ, իսլամը հանդես էր գալիս որպես քրիստոնեության ուժեղ ախոյան։ Իրանում Հռոմի հավատասփյուռ քարոզիչների կողմից մահմեդականներին «դարձի բերելը» ոչ միայն հանդիպում էր անհաղթահարելի դժվարությունների, այլև խիստ վտանգավոր էր։ Քրիստոնեության քարոզչությունը առաջ

---

6 T. Herbert, Travels in Persia, New York. 1929, p. 26[illegible].

7 „Encyclopedie theologiqie, t. 20. Dictionnaire des ordres religieux ou histoire des ordres monas iques, religieux et militaire", t. 1, Paris, 1847, p. 653.

8 „A Chronicle of the Carmelites in Persia and the Papal mission of the XVIIth and XVIIIth centuries", vol. I—II, London, 1939.

9 Նույն տեղում, հ. I, էջ 105։

10 Նույն տեղում, էջ 531։

11 Նույն տեղում, հ. II, էջ 790, 950։

12 Նույն տեղում, հ. I, էջ 543։

13 Նույն տեղում, էջ 317, 504, 511, 537, 540, և II, էջ 1077, 1211։

14 Berthold, Historie de l'etablissement de la mission en Perse par les peres Carmes dechausses, Bruxelles. 1885, p. 246—247.

էր բերում շիա հոգևորականության, շահական կառավարության և մահմեդական մոլեռանդ ամբոխի կատաղությունը։ Հենց ինքը՝ «քրիստոնեասեր» հորջորջված շահ Աբբաս I-ը, դաժանորեն պատժում էր հավատուրաց մահմեդականներին, նրանց դատապարտելով քառատման, խարույկի վրա այրվելու կամ ֆանատիկոս ամբոխի քարծեծի[15]։

Նման պարագաներում մահմեդականների շրջանում միսիոներների հունձքը գործնականում հավասար էր զրոյի։ Բավական է ասել, որ Սպահանում կարմելյանների գործունեության առաջին տասներկու տարիների ընթացքում հավատափոխ եղան ընդամենը տասներկու մահմեդական[16]։ Ճարահատյալ միսիոներները դիմում էին ամենածայրահեղ միջոցների։ Այսպես, նրանք հաճախ կիրառում էին ծանր հիվանդ կամ մահամերձ մահմեդական երեխաներին դավանափոխ անելու ձևը[17]։ Հուսահատության եզրը հասած նրանց ծնողները իրենց զավակներին փրկելու հույսով նրանց հանձնում էին կարմելյան բժիշկներին[18]։ Հաջողություն չունեցան նաև նրանց փորձերը՝ կաթոլիկությունը Իրանի կրակապաշտների շրջանում տարածելու ուղղությամբ[19]։ Հասկանալի է, որ նման պարագաներում Իրանում միսիոներական քարոզչության հիմնական օբյեկտ էին դառնալու այդ երկրի քրիստոնյա բնակչության մեծամասնությունը կազմող հայերը[20]։ Պատահական չէ, որ «Հավատի տարածման ս. Ժողովն» Իրանում գործող միսիոներներին ուղղված հրահանգներում հատուկ շեշտում էր հայ բնակչության շրջանում միսիոներական քարոզչության հույժ կարևորության մասին[21]։ Հռոմի կողմից միսիոներներին հանձնարարված մեկ այլ հրահանգում, որն ունի «Հայերի հետ վերաբերմունքի ձևերը» խոսուն վերնագիրը, մանրամասն խորհուրդներ էին տրվում հայ բնակչության շրջանում գործելու ձևերի ու մեթոդների մասին[22]։

Հայ բնակչության նկատմամբ միսիոներների հատուկ հետաքրքրությունը պայմանավորված չէր լոկ նրանով, որ նրանց շրջանում կաթոլիկության քարոզչությունը չէր հանդիպում մահմեդական պետության հակազդեցությանը։ Բանն այն է, որ հայերը Իրանի արտաքին առևտրի մեջ խաղում էին բացառիկ կարևոր դեր։ «Այդ նրանք են,— գրում էր ճիզվիտ Ֆլերիոն,— որ իրականացնում են ողջ Արևելքի առևտուրը և մեծապես նպաստում են Եվրոպայի բազմաթիվ քաղաքներում առևտրական հարաբերությունների ծաղկմանը»[23]։ Այն հանգամանքը, որ հայերի նկատմամբ հետաքրքրության հիմնական պատճառը եվրոպական առևտրական կապիտալի շահերն էին, անսքող երևում է նաև կապուչինյան միաբանության անդամ Ռաֆայել դյու Մանի գրքից[24]։ Անտարակույս, այս հանգամանքը ցույց է տալիս, որ կարմելյանների եռանդուն գործունեությունը իրանահայության շրջանում դեպի Իրան եվրոպական պետությունների գաղութային ներթափանցման քաղաքականության իրականացման գլխավոր օղակներից էր։

---

15 „A Chronicle . . . ". vol. I, p 359 -266, vol. II. p. 925.

16 Նույն տեղում, հ. I, էջ 315, 345, հ. II, էջ 931։

17 Rhodes. Alexandre de. Relation de la mission des peres de la compagnie de Jesus, etablie dans le royaume de Perse, Paris, 1659, p. 29.

18 „A Chronicle . . . ", vol. II, p. 847.

19 „Relation d'une mission faite nouvelle neut par monseigneur l'archeveque d'Ancyre a Ispahan en Perse pour la reunion des armeniens a l'eglise catholique", Paris, 1702, p. 136—138.

20 В. В. Бартольд. Место прикаспийских областей в истории мусульманского мира. Баку, 1924, с. 113.

21 „A Chronicle . . . ", vol. I, p. 191, 197—198.

22 „Lettres edifiantes et curieuses, ecrites des missions etrangeres", t. I, Paris, 1780, p. 144—149.

23 Th. Ch. Fleuriau. Նշվ. աշխ. էջ 6։

24 Raphael du Mans. Estat de la Perse en 1660, Paris, 1890, p. 342.

Սակայն միսիոներները հիանալի գիտակցում էին, որ վերջին հաշվով իրանահայերը շահի հպատակներն են և նրանց կաթոլիկացումը կարող է դիտվել իբրև Իրանի շահերի դեմ ուղղված հակապետական գործ և առաջ բերել դիմադրություն։ Նկատի էր առնվում նաև այն, որ Իրանում ընդհանուր մթնոլորտն այնպիսին էր, որ այնտեղ անվստահությամբ էին վերաբերվում դեպի արևմտյան քրիստոնյա աշխարհը և ժամանակ առ ժամանակ տեղի էին ունենում հակաքրիստոնեական մոլեռանդության բռնկումներ։ Այսպես, տեղեկանալով, որ պորտուգալական Սիրեն քաղաքի եպիսկոպոս Անտոնիո դե Գուվեան հայերին անվանում է իր «հոտը», շահ Աբբասը սարսափելի զայրանում է, դա գնահատելով որպես ոտնձգություն իր հպատակների նկատմամբ։ Սարսափահար պորտուգալական միսիոներները 1613 թ.-ի հոկտեմբերի 21-ին որոշում են անհապաղ հեռանալ Սպահանից[25]։

Առհասարակ, միսիոներների ու նրանց գործունեության նկատմամբ շահական իշխանությունների վերաբերմունքը միանշանակ չէր։ Անտարակույս, այդ հակասական դիրքորոշման մակընթացություններն ու տեղատվությունները պայմանավորված էին քաղաքական հանգամանքներով։

Իրանահայ գաղթօջախների մեջ Նոր Ջուղան կաթոլիկ միսիոներների, այդ թվում նաև կարմելյանների, հատուկ հետաքրքրության ու սևեռուն ուշադրության առարկան էր։ Դա պայմանավորված էր մի շարք հանգամանքներով։ Նախ, այդ գաղթօջախը XVII դ. հայ առևտրական կապիտալի ամենախոշոր ու ամենաաշքի ընկնող կենտրոնն էր։ Նոր Ջուղայի վաճառականությունն առաջատար դեր էր խաղում Իրանի տնտեսական կյանքում, որպես Արևմուտքի և Արևելքի երկրների հետ միջազգային առևտրական կապերի իրագործող[26]։ Այդ գաղթօջախը նաև Իրանի ու Հնդկաստանի հայության թեմական կենտրոնն էր։ Միաժամանակ այն ակնառու դեր էր խաղում համայն հայության հասարակական-կրոնական, ազգային-մշակութային և քաղաքական կյանքում։

Ահա այս բոլորը նկատի ունենալով, Վատիկանն այդ հայաքաղաքի բնակչության կաթոլիկացումը դիտում էր որպես Իրանում հետագա հաջողությունների կարևորագույն կռվան։ Դրա ցայտուն վկայությունն են «Կարմելյանների տարեգրության» մեջ տեղ գտած բազմաթիվ հրահանգներն ու Հռոմ ուղարկված տեղեկատվությունները։ Դրանցից մեկում ուղղակի ասվում է, որ Իրանում գործող կարմելյաններն իրենց ուշադրությունը կենտրոնացրել են գերազանցապես Նոր Ջուղայի հայերի վրա[27]։

Իսկ ինչպիսի՞ վերաբերմունք էր դրսևորում հայ բնակչությունը կաթոլիկ քարոզիչների նկատմամբ։ Կարմելյան Դիմասն իր 1631 թ. թվակիր նամակում վկայում է, որ սկզբնական շրջանում, այսինքն 1607 թ. հետո, Նոր Ջուղայում ինչպես հոգևորականները, այնպես էլ հասարակ ժողովուրդը չափազանց բարյացակամ վերաբերմունք էին դրսևորում իրենց նկատմամբ, չզլանալով նույնիսկ առատ նվիրատվություններ անել և այլն[28]։ Մովսես Սյունեցի կաթողիկոսը 1632 թ. Լեհաստանի Վլադիսլավ VII թագավորին ուղղած նամակում նշում էր, որ հայերը ոչ միայն թշնամանք չեն ցուցաբերում կաթոլիկների նկատմամբ, այլև նույնիսկ ընդունում և հյուրընկալում են միսիոներներին՝ որպես իրենց եղբայրների[29]։ Անտարակույս, նման վերաբերմունքի

---

25 Ռ. Վ. Կյուլպենկյան, Հայ-պորտուգալական հարաբերություններ, Երևան, 1956, էջ 120։

26 В. А. Байбуртян, Армянская колония Новой Джульфы в XVII веке (Роль Новой Джульфы в ирано-европейских политических и экономических связях), Ереван, 1969.

27 „A Chronicle . . . ", vol. II, p. 1072.

28 Նույն տեղում, էջ 845։

29 Ղ. Ալիշան, Կամենից, Վենետիկ, 1896, էջ 243։

պատճառները քաղաքական էին։ Նախ, Աբբաս I-ի կողմից Հայաստանից բռնագաղթի ենթարկված ժողովուրդը բնական մղումով հակված էր դեպի «եղբայր-քրիստոնյաները»։ Այնուհետև, ապրելով մահմեդական պետության լծի տակ, իսլամական ֆանատիկոսության բռնկումների մշտական սպառնալիքի ներքո, ենթարկվելով շահական աստիճանավորների անլուր հարբստահարություններին, ազգային ու կրոնական հալածանքների և այլն, իրանահայերը հույսեր էին փայփայում, որ միսիոներների թիկունքում կանգնած քրիստոնյա պետությունների օգնությամբ հայությունը կարող է ազատագրվել ատելի օտար լծից՝ համաձայն դարերի խորքից եկող հայ ազատագրական լեգենդի[30]։ Բացի այդ հեռավոր ու անորոշ քաղաքական ակնկալիքներից, իրանահայությունը, հատկապես նրա աշխատավորական խավերը, միսիոներներից օգնություն ու մխիթարություն էին սպասում նաև առօրյա կյանքում։ Իրենց հերթին, այդ խավերի համակրանքն ու վստահությունը շահելու համար, միսիոներները զբաղվում էին բարեգործությամբ՝ ցուցաբերում էին անվճար բժշկական օգնություն, ձրի ուսուցանում էին նրանց երեխաներին, հաճախ միջնորդում էին իշխանությունների առաջ՝ հայերի հարկերը թեթևացնելու հարցով, երբեմն նույնիսկ վճարում էին չունևորների պարտքերը և այլն։ Նման օրինակները «Կարմելյանների տարեգրության» մեջ բազմաթիվ են։ Այսպես, 1607 թ. Հռոմից Ղազվինի վրայով Սպահան մեկնելու ճանապարհին կարմելյանները միջնորդում են Ղազվինի քաղաքապետի առաջ, որպեսզի նա ձերբակալումից ազատի հանիրավի ամբաստանված մի քանի հայերի։ Քննելով գործը, քաղաքապետն ազատ է արձակում նրանց[31]։ Պարսից ծոցում ստրկավաճառությամբ զբաղվող պորտուգալացիներին վճարելով 150 սկուդի, կարմելյանները փրկագնում են 12 հայ պատանիների[32]։ Վենետիկում թիապարտության դատապարտված երեք հայեր դարձյալ կարմելյանների միջամտության շնորհիվ ազատ են արձակվում[33]։ Մեկ այլ ուշագրավ փաստ ևս։ 1624 թ. ի նշանավորումն թուրքերի նկատմամբ տարած խոշոր հաղթանակի և Բաղդադի հետգրավման, շահ Աբբաս I-ը որոշում է բռնի մահմեդականացնել Սպահանի մոտ գտնվող Չհարմահալ գավառի 43 հայկական գյուղերի բնակչությանը։ Դարձյալ գործին միջամտում են կարմելյան միսիոներները և, կաշառելով արքունիքի բարձրաստիճան անձանցից մեկին, որին հանձնարարված էր ի կատար ածել այդ հրամանը, կարողանում են հայերից հեռացնել այդ սպառնալիքը[34]։ Հայտնի է, որ Անդրկովկասից գաղթեցված հայ բնակչությունից մոտ 10 հազար տղաներ ու աղջիկներ տրվեցին պարսից մեծամեծերին՝ «ի ծառայություն»։ Հայոց կաթողիկոսին և եպիսկոպոսներին իրավունք էր տրված փրկագնել գերվածներին։ Սակայն նրանք ի վիճակի չէին օգտվել այդ իրավունքից կամ օգտվում էին շնչին չափով, դրամական միջոցներ չունենալու պատճառով։ Դրանից անմիջապես օգտվում են կարմելյանները, որոնք սկսում են փրկագնել հայերին[35]։

Անտարակույս, նրանց վերոհիշյալ ֆիլանտրոպիստական քաղաքականությամբ պետք է բացատրել այն իրողությունը, որ գնալով իրանահայության շրջանում միսիոներների հունձքն առատանում էր։ Կարմելյան էմանուիլն այդ առթիվ գրում էր, որ իր միաբանության անդամներն ակնառու հաջողությունները

30 Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., գիրք Ա, Երևան, 1957, նաև՝ Michel Febure. Theatre de la Turquie. Tradult d'Italien en françois par son auteur le sieur Michel Febure. Paris, 1682, p. 423.

31 „A Chronicle . . . ". vol. I, p. 120.

32 Նույն տեղում, էջ 207։

33 Նույն տեղում, հ. II, էջ 1074։

34 Նույն տեղում, էջ 1074, Ա ռ ա ք ել Դ ա վ ր ի ժ ե ց ի, Պատմություն, Երևան, 1988, էջ 135—140։

35 „A Chronicle". . . ". vol. I, p. 265. 271.

ներ ունեն նույնիսկ Համադան քաղաքում, որի բնակիչները, նրա ասելով, ողջ պարսկահայության շրջանում աչքի էին ընկնում իրենց համառ ու կամակոր խառնվածքով[36]։

Միսիոներները հատկապես մեծ եռանդ ու հետևողականություն էին դրսևորում հայ առաքելական եկեղեցին Հռոմի աթոռին ենթարկելու ուղղությամբ։ Այդ նպատակին հասնելու կարևոր գրավական էր դիտվում հատկապես հայ բարձր հոգևորականությանը և առաջին հերթին կաթողիկոսներին կաթոլիկ եկեղեցու ծոցը ներգրավելը։ «Կարմելյանների տարեգրության» մեջ բազմաթիվ փաստերի ենք հանդիպում հայ կաթողիկոսներին «դարձի բերելու» և նրանց Վատիկանի ուռկանը գցելու փորձերի վերաբերյալ[37]։

Ճիշտ է, հայ կաթողիկոսներից շատերը տարբեր շարժառիթներով հայտնում էին իրենց գրավոր հնազանդությունը Վատիկանին[38], սակայն դա առերես հնազանդություն էր, առավելապես թելադրված սեփական ժողովրդի ազգային փրկության շահերից։

Հայ կաթողիկոսների կողմից կաթոլիկություն ընդունելու և Հռոմի աթոռի հետ նրանց միանալու կամ ունիա կազմելու վերաբերյալ միսիոներների հաղորդած տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը։ Տվյալ դեպքում նրանք ցանկալին ներկայացնում են իրականության տեղ։ Միանգամայն բացահայտվում է նաև փաստերը կեղծելու միսիոներների ակնառու հակումը։ Հողմացրիվ է լինում նաև կաթոլիկության ջատագովների հորինած առասպելն այն մասին, որ հայ ժողովրդի շրջանում պապական ներկայացուցիչների գործունեությունը հետապնդում էր բացառապես մարդասիրական ու ազատագրական նպատակներ։

1645 թ. սկսած նկատվում է իրանահայության շրջանում և առաջին հերթին Նոր Ջուղայում միսիոներների գործունեության շեշտակի ակտիվացում։ 1652 թ. Նոր Ջուղայում կարմելյանները հիմնում են մշտական աթոռանիստ։ Որպես այդ նոր քաղաքականության նախաձեռնող ու ջատագով հանդես է գալիս դոմինիկյան կրոնավոր Պիրոմալին, որը երկար տարիներ ապրել էր Հայաստանում, խորապես ուսումնասիրել հայոց պատմությունը, լեզուն և գրականությունը։ Նոր Ջուղայում կարմելյանների գործունեության հաջողության լուրջ կռվան էր այն, որ տեղի վաճառականական-խոջայական ազդեցիկ դասը, առևտրական սերտ շահերով կապված լինելով Վենետիկի և Ջենովայի հանրապետությունների, Ֆրանսիայի, Լեհաստանի, Իսպանիայի և այլ կաթոլիկական երկրների հետ, աշխատում էր բարի հարաբերությունները պահպանել լատին կրոնապետության և Իրանում գտնվող նրանց առաքյալների հետ ու այդ ճանապարհով ստանալ վերոհիշյալ պետությունների և Վատիկանի ամենազոր աջակցությունը։ Այսպես, Հռոմի Պ. ժողովը 1629 թ. օգոստոսին Ֆրանսիայում գտնվող պապական նվիրակի միջոցով Նոր Ջուղա է ուղարկում Խոջա Նազարին ուղղված մի շնորհակալագիր, որտեղ իր երախտագիտությունն էր հայտնում Իրանում գործող միսիոներներին օգնություն ցույց տալու համար[39]։

Կարմելյանների համար հատկապես կարևոր հենարան էր Նոր Ջուղայի գաղթօջախի կաթոլիկ հայերի բավական խոշոր համայնքը[40]։ Նրանց մեջ կային մեծահարուստ դրամատերեր ու վաճառականներ, որոնք ֆինանսական խոշոր օգնություն էին ցույց տալիս միսիոներներին և հովանավորում էին

---

36 Նույն տեղում, էջ 99—101։

37 „A Chronicle . . .", vol. I, p. 319; vol. II. p. 820, 846, 1000.

38 Vernier R. P. Donat. Histoire du Patriarcat Armenien Catholique, Lyon-Paris, 1891, p. 277—279. Փ. Թուռնպիզ, Հայաստան եւ հայ եկեղեցական պատմութիւն, Վենետիկ, 1930, էջ 73—77։

39 Հ. Ն. Ակինեան, Մովսէս Գ. Տաթեւացի կաթողիկոս. կեանքն եւ գործունէութիւնը («Հանդէս ամսօրեայ», 1933, № 7—8, էջ 384—386)։

40 Հ. Տէր-Յովհանեանց, Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. II, Նոր Ջուղա, 1880, էջ 265։

նրանց։ Ունիթոր հայերի մեջ հատկապես աչքի էր ընկնում Շահրիմանյանների ընտանիքը, որը Նոր Ջուղայի կաթոլիկ համայնքի փաստացի ղեկավարն էր։ Այս ընտանիքի մասին կարմելյան միսիոներներից մեկը գրում էր. «Սահրատները (Շահրիմանյանները— Ա. Բ.) ունեն հսկայական հարստություններ, որոնք գտնվում են աշխարհի բոլոր մասերում ցրված նրանց գործակալների մոտ»[41]։ Միայն կարմելյանների միաբանության անդամներին նրանք տրամադրում էին ամենամյա դրամական նպաստ՝ 500 սկուդի գումարով։ Բացի այդ, Շահրիմանյանները թույլատրել էին կարմելյաններին օգտվել իրենց պատկանող հասարակական բաղնիքի եկամուտներից, ինչպես նաև Ֆրանսիացի ճանապարհորդ Թավերնիեի կողմից իրենց մոտ պահ դրված դրամադլխի տոկոսներից[42]։ Այս ընտանիքի դրամական օգնության շնորհիվ մի շարք միաբանությունների առաքելություններ այն աստիճանի ապահովված էին, որ բնավ չէին զգում Հռոմի և Եվրոպայի կաթոլիկ միապետների օգնության կարիքը[43]։ Ի տրիտուր իրենց այդ ծառայությունների, Շահրիմանյանները Հռոմի պապից ու եվրոպական միապետներից ստացան մի շարք պատվո նշաններ, արտոնություններ ու իրավունքներ։ Այսպես, Ինոկենտիոս XII պապը 1696 թ. նրանց շնորհեց Հռոմի քաղաքացու կոչում և հատկացրեց Հռոմում ու Անկոնայում ազատ առևտրի իրավունք[44]։ 1699 թ. ավստրիական կայսր Լեոպոլդ I Հաբսբուրգը նրանց շնորհեց կոմսի տիտղոս, իսկ Աբբատ Ժոզեֆը առաջարկություն մտցրեց Շահրիմանյաններին տրամադրելու ազատ առևտրի իրավունք Ֆրանսիայի ողջ տարածքում[45]։

Որպես կանոն, կարմելյանները կաթոլիկություն ընդունած հայ վաճառականներին տրամադրում էին համապատասխան երաշխավորագրեր, որոնց օգնությամբ նրանք եվրոպական երկրներում ձեռք էին բերում զանազան դյուրություններ։ Այսպես, կարմելյանների օգնությամբ հայ վաճառականները կարողացան հետ ստանալ տարբեր պատճառներով եվրոպական երկրներում կորցրած իրենց դրամներն ու ապրանքները[46]։ Միսիոներները խաղում էին նաև բանկային միջնորդների հուսալի դեր։ Նրանց օգնությամբ հայ վաճառականները եվրոպական երկրների հետ կատարում էին դրամական խոշոր գործառնություններ[47]։ Այսպիսով, միանգամայն ակնհայտ է, որ հայ վաճառականության մի մասն ընդունելով կաթոլիկությունը, առավելապես հետապընդում էր շահադիտական նպատակներ։

Այն խոշորների նկատմամբ, որոնք հրաժարվում էին ընդունել Հռոմի տիրապետությունը և կամ հայ եկեղեցու դիրքերից հանդես էին գալիս կաթոլիկ քարոզչության դեմ, կիրառվում էին խիստ պատժամիջոցներ[48]։ Նման դեպքերում որպես կանոն կարմելյանները դիմում էին եվրոպական միապետներին ու Հռոմի պապին՝ պահանջելով զանազան տուգանքների միջոցով նեղել իրենց տիրապետության սահմաններում առևտուր անող հայ վաճառականներին[49], արգելել նրանց մուտքը «պապական պետության» սահմանները, բռնագրավել եվրոպական բանկերում դրված նրանց ավանդները, արգելք դնել առևտրական նավերի վրա, զրկել արտոնություններից ու իրավունքնե-

---

41 „A Chronicle . . .", vol. I, p. 650.

42 Նույն տեղում, էջ 500, 515, հ. II, էջ 1078, 1080։

43 Նույն տեղում, հ. I, էջ 457, հ. II, էջ 1081—1082։

44 Նույն տեղում, հ. II, էջ 1358։

45 Նույն տեղում, էջ 937։

46 Նույն տեղում, հ. I, էջ 295, 715, հ. II, էջ 1073։

47 Նույն տեղում, հ. II, էջ 375, 505։

48 Նույն տեղում, հ. I, էջ 439, 461, 469, հ. II, էջ 1074։

49 Fr. Macler. Notes de manuscrits arméniens ou relatifs aux arméniens vus dans quelques bibliothèques de la péninsule ibérique et du sud-est de la France („Revue des Études Arméniennes", Paris, 1922, t. 2, p. 18—20).

րից և այլն [50]։ Երբեմն կարմելյանները չէին խորշում դիմել նաև ֆիզիկական ուժի։ Այսպես, երբ 1694 թ. Նոր Ջուղայում նրանք ձեռնամուխ եղան նոր եկեղեցու շինարարությանը, զայրացած հայ ամբոխը շրջապատեց տեղի կարմելյան կենտրոնը և սկսեց սպառնալիքներ տեղալ միսիոներների հասցեին։ Վերջիններս օգնության աղերսով դիմում են շահական արքունիքում Լեհաստանի դեսպան, ճիզվիտ Իգնատիուս Զապոլսկուն, որն անմիջապես զինված հեծյալներ է ուղարկում այնտեղ և ցրում հայ ցուցարարներին[51]։

Կարմելյաններն առանձնակի կարևոր նշանակություն էին տալիս դպրոցների բացմանը, որոնք կոչված էին հայ մատաղ սերնդին դաստիարակելու կաթոլիկության ոգով։ Նրանց հաջողվեց Նոր Ջուղայում, Շիրազում, Սպահանում և Իրանի հայ բնակչություն ունեցող մի շարք քաղաքներում բաց անել դպրոցներ[52]։ Կաթոլիկ քարոզչություն տարածելու գործում տեղական բնակչությունից օգնականներ պատրաստելու նպատակով կարմելյանները լայնորեն օգտագործում էին նաև դեռևս XVI դ. Հռոմում իրենց բաց արած հատուկ դպրոցը (Collegium Urbanum de propeganda), որտեղ ուսանում էին մեծ թվով հայ պատանիներ[53]։ Նոր Ջուղայում կարմելյանները դպրոց էին բացել նաև հայ տարեց բնակչության համար, որտեղ նրանք սովորում էին գրաճանաչություն, ուսումնասիրում ճարտասանություն, փիլիսոփայություն, երկրաչափություն, քերականություն, լեզուներ և այլ առարկաներ[54]։

Անտարակույս, այդ դպրոցները որոշակի դեր խաղացել են հայ ժողովրդին եվրոպական գիտության ու մշակույթի հետ հաղորդակցելու գործում։ Սակայն մյուս կողմից ակնառու է դրանց խիստ բացասական դերն այն առումով, որ այդ դպրոցները ծառայել են որպես եվրոպական կաթոլիկական պետությունների կուլտուրական նվաճողականության ազդու գործիքներ[55]։

Կարմելյան միսիոներների գործունեությունն իրանահայության շրջանում մշտապես հանդիպում էր դիմադրության ու հակահարվածի։ «Կարմելյանների տարեգրության» հրատարակիչը հայերի կողմից միսիոներների նկատմամբ թշնամանքի շեշտակի ուժեղացման հիմնական պատճառ է համարում XVII դ. Լեհաստանում տեղի ունեցած իրադարձությունները, երբ Նիկոլ Թորոսովիչի գլխավորությամբ այնտեղ սկսվեց անզուսպ լատինականացում և ի վերջո բռնի կերպով Լեհաստանի հայ գաղութին պարտադրվեց կաթոլիկությունը[56], որի հետևանքով կարճ ժամանակամիջոցում գաղութը կորցրեց իր ազգային դեմքը և ենթարկվեց ձուլման։ Այս ողբերգական իրադարձությունները և՛ բուն Հայաստանում, և՛ գաղթաշխարհում հայ ժողովրդի համար հանդիսացան միսիոներների հետապնդած հետին նպատակների պերճախոս վկայություն։ Ի դեպ, կարմելյանների դեմ իրանահայության մղած պայքարը զորավոր խթան ստացավ նաև այն պատճառով, որ Լեհաստանի իրադարձություններում ճիզվիտների հետ համատեղ ակտիվ դեր էր խաղացել նաև կարմելյանների միաբանությունը։

Իրանահայ գաղութում հակակաթոլիկական պայքարի կենտրոնն էր Նոր Ջուղայի գաղթօջախը։ Ռաֆայել գյու Մանը վկայում է, որ տեղի հոգևորականության դիրքորոշումը միսիոներների նկատմամբ այն աստիճանի թշնա-

---

50 „A Chronicle . . .", vol. I, p. 506—510.

51 Նույն տեղում, հ. II, էջ 861։

52 Նույն տեղում, հ. I, էջ 319, 645, 526։

53 Վարդան Ղստկարեան, եկեղեցական պատմութիւն, Վիէննա, 1872, էջ 353։

54 „A Chronicle . . .", vol. I, p. 517—518.

55 Կաթոլիկական դպրոցների մասին մանրամասն տե՛ս R. H. Kevorkian. Livre-missionnaire et enseignement catholique chez les Arméniens entrs 1583 et 1700 („Revue des Études Arméniennes", t. 17, 1983, p. 589—599).

56 «Բռնի մկրտիչն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցվոյն Հռովմայ», Ս. Պետերբուրգ, 1884։

մական էր, որ նա քարոզում էր իր հոտին՝ «ավելի լավ է դարձեք մահմեդականներ, քան կաթոլիկներ»[57]։ Ընդ որում, իրանահայության պայքարն անխտիր ուղղված էր կաթոլիկական բոլոր միաբանությունների դեմ[58]։

Պայքարի հիմնական կազմակերպիչը, անշուշտ, հայ հոգևորականությունն էր, որի շահերը վտանգված էին միսիոներների գործունեության հետևանքով։ Վախենալով կորցնել իր հոտը, հետևաբար նաև եկամտի աղբյուրները, նա նետվում է գրոհի։ Նոր Ջուղայի առաջնորդ Դավիթ արքեպիսկոպոսը 1679 թ. մայիսի 10-ին հրապարակում է մի կոնդակ, որտեղ, դիմելով հայ վաճառականությանը, պահանջում էր որևէ հարաբերության մեջ չմտնել ֆրանկների հետ։ «Ով ոք նոցա հետ այլ խօսի, կամ առևտուր առնէ, կամ քսոն տայ, կամ օդէն թողու, կամ ինքն նոցա օդէն գնայ, նզովեալ եզիցի և կապեալ»,— սպառնում էր նա[59]։

Հայ հոգևորականությունը կանգ չէր առնում նաև ավելի վճռական գործողությունների առջև։ Նոր Ջուղայի թեմական առաջնորդ Ստեփանոս եպիսկոպոսը կարողացավ շահ Սուլեյմանին (1666—1694) համոզել, որ միսիոներների գործունեությունը մի վտանգ է, որն ուղղված է ոչ այնքան հայերի, որքան Իրանի պետական շահերի դեմ։ Որ միսիոներների հիմնական խնդիրն է լրտեսական տեղեկություններ հավաքել Իրանի մասին և դրանք հաղորդել եվրոպական տերություններին։ Որ միսիոներները Իրանում տարածում են ապստամբության և հեղափոխության մտքեր։ Որ առհասարակ օտարերկրյա ներթափանցման իրական նպատակը Իրանի գաղութացումն է[60]։

Կասկածից վեր է, որ հայ հոգևորականությունը դիմում էր պայքարի նման մեթոդների բացառապես ինքնապաշտպանության նպատակներով։ Հաճախ իրանահայությունը չէր խորշում դիմելու նաև պարսկական իշխանությունների աջակցությանը, քաջ գիտակցելով, որ օտարերկրյա ազդեցության դեմ պայքարի վճռորոշ հարցերում նրանց շահերը համընկնում են։ Հենց շահական մեծատոհմիկ աստիճանավորների և արքունիքի երևելի անձանց՝ շահի մոտ, Սպահանի գլխավոր դատավորի՝ ղադիի, շահական արքունիքի գլխավոր ներքինի Աղա Քեմալի աջակցությամբ, իհարկե նաև կաշառքի ուժով Ստեփանոս եպիսկոպոսին հաջողվում է 1689 թ. Նոր Ջուղայից, թեկուզ և ժամանակավորապես, վռնդել ինչպես կարմելյաններին, այնպես էլ ճիզվիտներին, քանդել տալ Նոր Ջուղայում կարմելյանների եկեղեցին և «ընկճել յոյժ զկողմն պապականաց»[61]։ Միաժամանակ, Ստեփանոս եպիսկոպոսը հատուկ կոնդակով արգելեց ամուսնությունները հայերի և «ֆրանկների» միջև[62]։ Ավելի ուշ ջուղայեցիների հորդորներով էջմիածնի կաթողիկոսը նույնիսկ դիմեց Թավրիզի կառավարչին, խնդրելով, որ կաթոլիկություն ընդունելու ցանկություն հայտնած հայերին բռնի մահմեդականացնեն[63]։ Հարկ է նշել, որ Ստեփանոս եպիսկոպոսը Նոր Ջուղայում հալածանք սկսելով կաթոլիկների դեմ, ցանկանում էր այդ հալածանքն ընդհանրական դարձնել ամբողջ Հայաստանում, որը, սակայն, չհաջողվեց։

Նոր Ջուղայում կաթոլիկ քարոզչությանը դիմադրելու կարևոր կռվան էր դիտվում գրատպությունը։ 1684 թ. վերաբացված Նոր Ջուղայի տպարանը տպագրեց Հովհաննես Մրքուզի «Գիրք իսկապէս համառոտ վասն ճշմարիտ

---

57 Raphael du Mans, նշվ. աշխ., էջ 329.

58 „Historie universelle des missions catholiques Publiée sous la direction de monseigneur S. Dalacroix". vol. 2, Paris, 1957, p. 98.

59 Մեսրոպ վ. Թերզյան, Հակոբ Դ. Ջուղայեցի, Պեյրութ, 1956, էջ 11—12։

60 Հ. Տեր-Յովհաննեսյան, նշվ. աշխ., հ. II, էջ 266։ Տե՛ս նաև, Tournefort Pitton de. Relation d'un Voyage du Levant, Paris, 1717, t. 2, p. 166.

61 Հ. Տեր-Յովհաննեսյան, նշվ. աշխ., հ. II, էջ 267, „A Chronicle . . .", vol. I, p. 461—474.

62 „A Chronicle . . .", vol. I, p. 456.

63 Նույն տեղում, էջ 521։

հաւատոյ» և Աղեքսանդր վարդապետի[64] «Գիրք, որ ասի վիճաբանական» հակակաթոլիկական դրվածքները[65]։ Նոր Ջուղայի տպարանում տպագրվում է նաև «Մատեան հակառակ երկաբնակաց» գիրքը, որի առթիվ կաթոլիկները կառավարության առջև հայերին զրպարտում են, որ իբր նրանք «հակառակ վարդապետութեանն ղուրանի տպեալ են զմատեանն»[66]։

Գուստավ Դյուպոն Ֆերիեն նշում է, որ Ֆրանսիայում կաթոլիկությանը նվիրվածության ոգով կրթություն ստացած հայ պատանիների մեծամասնությունը հարազատ վայրերը վերադառնալուց հետո դառնում էին կաթոլիկների ավելի կատաղի հալածողներ, քան նրանց հայրենակիցները[67]։ Իսկ ֆրանսիացի ճանապարհորդ Ժ. Շարդենը վկայում է, որ եթե միսիոներներն արևելյան քրիստոնյաների շրջանում իրենց գործունեության սեջ ձեռք են բերել հաջողություն, ապա համենայն դեպս ոչ հայերի մեջ[68]։

Միսիոներների դեմ պայքարում հոգևորականությունից հետ չէր մնում նաև հայ կոմպրադորական բուրժուազիան՝ խոշայությունը, որը միսիոներների գործունեության ճանապարհին մշտապես կանգնեցնում էր բազմապիսի պատնեշներ[69]։ Հակազդելով ու դիմադրություն ցույց տալով կաթոլիկ միսիոներներին, հայ առևտրական բուրժուազիան ոչ միայն մտահոգված էր իր առևտրական շահերը եվրոպական մրցակիցների ոտնձգություններից պաշտպանելու հոգսերով, այլև առաջնորդվում էր համազգային շահերով։ Անշուշտ, նրա այդ վարվելակերպն օբյեկտիվորեն ուղղված էր եվրոպական տերությունների գաղութակալական քաղաքականության դեմ և XVII դ. որոշակիորեն դժվարացնում էր ասիական այդ երկրում կապիտուլյացիոն ռեժիմի սահմանմանը։

Միսիոներության դեմ պայքարի ամենազդու ուժը ժողովրդական զանգվածներն էին, որոնք քաջ գիտակցում էին, որ Վատիկանը և կաթոլիկ միսիոներները իրենց գործունեությամբ տրոհում ու անդամալուծում են հայ ժողովրդի ուժերը, արգելակում ու դժվարացնում նրա համախմբման պրոցեսը, բթացնում նրա ազգային զգացումները, նպաստում ազգային ինքնագիտակցության կորստին, խորացնում ազգային երկպառակությունները, իրանահայության բեկորներին կտրում բուն հայրենիքի ժողովրդից և ուծացնում ու համաձուլում նրանց։

Այսպիսով, միանգամայն ակներև է, որ XVII դ. իր ազգային դիմագիծն ու ինքնությունը, իր հոգևոր ու մշակութային արժեքները պահպանելու և ազգային ազատագրման իղձը իրականացնելու համար իրանահայությունը ստիպված էր մահու և կենաց պայքար մղել ոչ միայն մահմեդականության, այլև կաթոլիկության ամենակուլ վտանգի դեմ։

ДЕЯТЕЛЬНОСТЬ МИССИОНЕРОВ ОРДЕНА КАРМЕЛИТОВ СРЕДИ АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ ИРАНА (XVII в.)

А. В. БАЙБУРТЯН

Резюме

В XVII в. европейские державы развернули на Востоке широкую колониальную экспансию с целью завоевания обширных местных рын-

---

64 Հետագայում էջմիածնի կաթողիկոս Աղեքսանդր Ջուղայեցի։

65 Հ. Տեր-Յովհաննեսեան, նշվ. աշխ. հ. II, էջ 200։

66 Նույն տեղում։

67 Gustave Dupont-Ferrier, Les Jeunes de langues ou „Arméniens" a. Louis-le Grand, („Revue des Etudes Armeniennes", 1922, t. II, p. 202—203).

68 J. Chardin, Voyages du chevalier Chardin en Perse, et autres lieux de l'Orient, Paris. 1811, t. 6, p 156—158.

69 „A Chronicle . . .", vol. I, p. 157.

ков и богатых источников сырья. Инициатором этой политики выступала европейская буржуазия, которая наряду с капитуляционными правами, различными неравноправными торговыми и политическими договорами широко использовала также религиозную пропаганду, осуществлявшуюся с помощью миссионеров различных католических орденов, в частности, подобную деятельность развернул кармелитский орден среди армянского населения Ирана. Борьба армянского населения Ирана против миссионеров провалила широкомасштабные планы Ватикана и католических держав не только в отношении Армении и армянского народа, но и в отношении Ирана .